է տալիս փեսին, որից յետոյ հանդիսականները վերցնում են թագաւորին և գնում նրա տունը, ուր հաւաքւում են բոլոր գիւղականները. նրանք թագաւորին տանում են հարսի տունը. այնտեղ նորից սկսում են պարել և ուրախանալ. ապա հարսի հայրն ու մայրը լալով օրհնում և համբուրում են փեսի և աղջկայ ճակատները, ու ահա զուռնաչին հրաժեշտի եղանակը հնչեցնում է. «թագուհին» (հարսը) հեկեկալով հրաժեշտ է տալիս իր ծնողներին, հայրական տանը. ապա դուրս են գալիս և գնում գէպի թագաւորի տունը գաւուլ-զուռնի առաջնորդութեամբ։ Այստեղ մինչև երեկոյ քէֆ են անում։ Բացի այդ, հարսանիքին աւելի փայլ տալու նպատակով հրաւիրում են երբեմն հայ աշուղներ, որոնք նստած հրաւիրեալների մէջ սաղ են ածում և երգում։ Սակայն նրանք բառի իսկական առումով աշուղներ չեն, այլ աշուղանման երգիչներ, որոնք երգում են առաւել յայտնի և աւելի ժողովրդականութիւն ստացած աշուղների հեղինակութիւնները։

Խաչվէրէ։ Երեկոյեան հասարակութիւնը ցրւում է, մնում են մի քանի հոգի և քահանան, որոնց համար մի փոքրիկ սեղան է պատրաստւում. մօտ մի ժամ ուրախանալուց յետոյ, քահանան խաչը վեր է հանում։ Փրանով հարսանիքը վերջանում է։

Աղջիկ փախցնելու սովորութիւնն այս գիւղերում չկայ։

Փէրիայում նորահարսը շատ իրաւազուրկ է, նա մինչև 70—80 տարեկան հասակը չհասած, տղամարդկանց (տէքրերի, սկեսրի, սկեսրարի և օտարների) հետ ոչ միայն իրաւունք չունի խօսելու, այլև ճաշելու, նստելու և երեսը բանալու։ Սովորաբար նա երեսը ծածկում է սպիտակ «եաշմաղ»—քընթակալով. գլխին կրում ահագին մի պատատանք, որ զարդարւած է լինում բամբակից ոլորած թելի վրայ կախ արած 20—30 պարսկական դրամներով. դա տեղական բարբառով «թախտաձ» է կոչւում, վրից կախում արծաթեայ մանեակ, որ «աշմ» են անւանում, իսկ բազուկներին կրում արծաթեայ